

բանութիւններով տարուայ 6—7 ամիսները սպանելու, պարապէր տնայնագործութեամբ և այլ օգտակար արհեստներով:

Վերջապէս կարելի էր հաստատել զիւղական բանկեր, բաց թողնելով զիւղացուն էժան կրեդիտ, ազատելով նրան վշշառուների ճանկերից: Մի խօսքով մեծ ասպարէզ կայ մեր մասնագէտ-ինստելիդէնտների, մեր զիւղատնտեսական ընկերութեան առաջ. հարկաւոր է նախաձեռնութիւն, էներգիա...

Այժմ երբ կովկասեան զիւղատնտեսական ընկերութիւնը գործի զլուխ անցնելով կազմակերպել է ցուցահանդէսը, թողուշադրութեան առնի և այս մոռացուած շրջանները, թող յատուկ մասնագէտներ ուղարկէ յիշեալ գաւառամասերը, հիմնէ կաթնատնտեսական և թռչնաբանական կայարաններ, տարածէ տնայնագործութիւնը և այլ արհեստներ ու պարապմունքներ և դրանով նա նպաստած կը լինէր այդ մոռացուած գաւառների ազգաբնակութեան տնտեսական բարօրութեան:

Ա.—ԴՕ

II. Վիճակագրական և եղեկութիւններ Սլեքսանդրօվօլի գաւառի հայ-լուսաւորչականների մասին:

Մեր գաւառական կեանքն ընդհանրապէս քիչ է ուսումնասիրուած: Գաւառների մասին մեր զրականութեան մէջ բացարձակ կերպով պակասում են վիճակագրական տեղեկութիւններ:

Վիճակոս լաջորդ Տատթէոս վարդապետը գործակալների միջոցով զիւղական քահանաներին*) տպագրած ցուցակներ էր ուղարկել Այդ ցուցակների մէջ նրանք պէտք է տեղեկութիւններ գրէին, Յիշեալ ցուցակների մէջ մարդահամարը թեթև սխալներ էր պարունակում, որոնց սուզելու համար մենք անձամբ գնացինք զիւղերը և զատարաններում եղածների հետ ողղեցինք: Խիսկասարութիւնների մասը վերաբերում էր վերջին քառամետկին, այն է 97, 98, 99 և 900 թուերին: Սրանց մէջ անձըշտութիւններն աչքի էին ընկնում, ուստի լաւ համարեցինք այս մասը նոր մէկից ուսումնասիրեւ չոգ: Կառավարութեան արխսից օգտուելու թուլտութիւն ստանալով այլ և այլ համեմատութիւնների համար քիչ համարեցինք չորս տարին, վերցրինք տասնամետակը՝ սկսած 91 թուից մինչև 900 թիւը: Ցուցակներում նշանակուած հողերի քանակութիւնը պակասաւոր

*) Եթէ քաղաքներում քահանաների մէջ եղած անհասասարութիւնն անտանելի է, որից և զիւղաւորապէս ծագում է անբաւականութիւն, վէճ, կափւ, զիւղերում հօ քահանաների դրութիւնը սոսկալի է արդէն: Դիտացին յօժարութեամբ չի տալ քահանալի հասոյթը. տարիներով ծիսակատարութիւն է անում մարդը և ոչինչ չի ստանում, ո՛չ պտղի և ո՛չ փողի չողաբաժինը, որ քահանան օրէնքով պէտք է ստանար, շատ զիւղերում զիւղացիք կոպտութեամբ խլել են նրա ձեռքից: Քահանան եթէ տանը աշխատող ձեռքեր ունի, լաւ, իսկ եթէ ո՛չ, ասպրում է յետին չքաւորութեան մէջ, անմռունջ տանելով իր ծանր խաչը:

էր և շատ տալրեր չափերով արտայալուսած, ուստի այդ մասը թռղնում ենք մի այլ անգամուար:

Այժմ դիմենք բուն դործին:

Ալեքսանդրօսի վիճակը, ըստ Հոգ. վարչութեան, բաժանուած է տասն և մեկ զործակալութեան: Կործակալութիւնների հոգեոր գործերը վարում են Հոգ. կառավարութեան կողմից նշանակած գիւղական քահանաները:

Կործակալութիւններն են՝ Օրթաքիլիսա, որին ենթարկուում են 20 զիւղեր, Բող-Խօսուշ 7 գիւղ, 2որլի՛ 14 գ., Նորաշէն՝ 12 գ., Արթիկ՝ 10 գ., Հոռոմ 12 գ., Մահմուտնուզ 10 գ., Տաւշան-Ղջլաղ 13 գ., Մեծ-Հարնի՛ 11 գ. Համամլի՛ 7 գ. և Մեծ-Ղարաքիլիսա 9 գիւղ (*), ընդամենը հարիւր քսան և հինգ գիւղ: Տեղի պղոթեան պատճառով զանց եմ առնում ցուցակագրել իւրաքանչիւր գիւղն առանձին-առանձիւն: յարմարութեան համար աղիսակի մէջ դնում եմ զործակալութիւնների դէմ գիւղերի թիւը, մարդահամարը և անասունների քանակութիւնը.

Համար	Կործակալութիւն-ներ	Քիւղ գիւղ	Համայնք գիւղ	Համայնք գիւղ	Արդարանք	Իրականական գործադրություն	Արդարանք անդամ	Արդարանք անդամ	Արդարանք անդամ	Արդարանք անդամ
1	Օրթաքիլիսա . . .	20	2,087	9,290	8,568	17,858	15,776	33,012		
2	Բող-Խօսուշ . . .	7	341	1,420	1,338	2,758	3,520	5,528		
3	Զորլի՛ . . .	14	853	3,619	3,259	6,878	6,378	9,605		
4	Նորաշէն . . .	12	938	4,380	4,059	8,439	8,634	10,849		
5	Արթիկ . . .	10	1,188	5,446	4,922	10,368	9,612	7,232 ¹⁾		
6	Հոռոմ . . .	12	1,518	6,331	5,835	12,166	11,414	6,155		
7	Մահմուտնուզ	10	1,365	5,644	5,156	10,800	7,656	6,465 ²⁾		
8	Տաւշան-Ղջլաղ	13	1,160	4,665	4,282	8,947	7,600	6,259		
9	Մեծ-Հարնի՛ . . .	11	1,348	6,236	5,579	11,815	11,309	24,030		
10	Համամլի՛ . . .	7	809	4,362	3,749	8,111	6,245	11,553		
11	Մեծ-Ղարաքիլիսա.	9	1,295	5,949	5,271	11,220	7,901	12,091		
	Ընդամենը . . .	125	12,902	57,342	52,018	109,360	96,045	132,779		

Ծան. Հաշիւը կազմուած է գարնան սկզբներին, որից լետոյ մի քանի գիւղերում պատահեց եղջիւրաւոր անասունների ժամանակատու, որից կոտորուել են մօտ 2000 կենդանիներ:

1) Վերջին երեք զործակալութիւնները, մինչև 41 թիւը, ենթարկուած են եղել Սանահնի վանքին, լետոյ միայն միացուած է Ալեքսանդրօսի վիճակին: Յիսնական թուների վերջերին քաղաքիս յաջորդ է կարգում հանգուցեալ Վարդան Եպիսկոպոս օձնեցին: Ժամանակակիցների վկայութեամբ հանգուցեալը խիստ դրամասէր է եղել: Օգոստելով իր գիրքից, ինչ-որ մի թուղթ է գուրս բերում Հոգ. կառավարութեան արխիւցից և նրանով պահանջում է Փամպակի այս մասից, որպէս Սանահնի վանքին երեւմ ենթարկուած գիւղեր, „գաւազանապտուղ“ և „սրբալրամ“ կոչուած նուէրները, որոնք տարիների ընթացքում ապասիկ են մնացել ծողովրդի միամիտ և շէն ժամանակը լինելու, այդ ապասիկներից ահազին տուրք է ծողովուել, որոնց մեծ մասը մտել է սրբազնի գրպանը:

2) Արթիկ, Մահմուտնուզ և Տաւշան-Ղջլաղ զործակալութիւնների գիւ-

Գործակալութիւններից ամենաբարձամարդն են՝ Օռթաքիլիսա, 17858 բնակչով, Հռոտու, 12166 բնակչով, Մեծ-Հարնի 11815 բնակչով, Մեծ-Դարբարիլիսա, 12220 ր., Մահմուտնով, 10800 ր. և Արթիկ, 10368 ր., իսկ մասցած գործակալութիւնները ունեն 10 հազարից պակաս բնակիչներ։

Վիճակի մէջ 200-ից աւելի տուն ունեցող զիւղերն են.

1)	Արթիկ	.	.	295	տուն	2,636	բնակչով
2)	Դուղբեանդ	.	.	203	>	1,695	>
3)	Կլի-Դարբաքիլիսա			348	>	2,568	>
4)	Համզաշիման	.	.	334	>	2,232	>
5)	Համամլի	.	.	356	>	3,138	>
6)	Հոռոմ	.	.	251	>	1,990	>
7)	Մեծ-Դարնի			468	>	3,300	>
8)	Մեծ-Հարնի	.	.	245	>	2,393	>
9)	Մեծ-Քափանակ	.		245	>	1,860	>
10)	Սօգիթիւ	.	.	296	>	2,598	>

40 գիւղեր ունեն 100-ից աւելի տներ, իսկ ամենափոքր գիւղերն են.

1) Սալութ. 16 տ. 117 բնակչով. 2) Սփանտի՛ 21 տ. 241 բնակչով.

3) Գայնդալա՛ 22 տ. 183 բն. 4) Ալիսան՝ 27 տ. 349 բ. և 5) Նոր-Բաշ գիւղ, 28 տ. 275 բնակչով։

Մնացած գիւղերը ունեն 30—100 տներ։

Սրական սեռը վիճակում իգականից աւելի է 5324-ով, իսկ քաղաքում համարեա երկու սեռն էլ հաւասար են թուով. (9227 արական, 9229 իգական)։

Երկու սեռի համագումարը՝ 109360 հոգի բաժանելով տների ընդհանուր թուի վրայ, 12902-ի, իրաքանչիւր տանն ընկնում է միջին թուով 8-ից աւելի անդամներ, իսկ քաղաքում ապրողների միջին թիւն ընկնում է 5 հոգի։

Բայց գիւղերում կան բազմանդամ գերդաստաններ, որոնք լիշեցնում են մեզ հին նահապետական բարի ժամանակների համակեցութիւնը։ Այժմ էլ, ինչպէտ առաջ, գիւղերում ապրում են միասին, մի ծածկի տակ, մի քանի եղբայրներ, իրանց որդիներով ու թոռներով, որտեղ մի քանի եղբայրներ, իրանց որդիներով ու թոռներով, որտեղ մի քանի օրորում, մի քանի կաթոսայ կերակուր եփում, հաց թխում, Ընթերցողներիս բարեմտութեան վրայ վատահելով՝ զնում եմ այսուղ մի քանի մեծ տների անուններ։

Քիւլունա գիւղում կենում է Քոթաննոնց մեծ ու հարուստ տունը՝ 75 անդամից բաղկացած։ Սրանք բացի անասուններից, ունեն մի ձեռատունկ ծառասոտն 4—5 հազար ծառով։

Աղքիլիսա գիւղ. ապրում են Կուսեմնենք, որոնց ընտանիքի անդ. թիւն է 55 հ.

"	"	"	Յակուենք,	"	"	"	32
---	---	---	-----------	---	---	---	----

"	"	"	Ալեքսանենք,	"	"	"	25
---	---	---	-------------	---	---	---	----

Դիլաքլար	"	"	Թուոյենց Սահակի ընտանիքը,	"	"	"	45
----------	---	---	---------------------------	---	---	---	----

Լծում են 2 գութան, 15 սալը. ունի 450 սոմար ցորեն ամբարած։

գերից Փոքր-Հարնի, Ղասումալի, Խաչաքիլիսա, Սարիբաշ, Աղին գիւղերը շունեն փոքր կենդանիներ՝ արօտատեղ չոնենալու պատճառով։

Նոյն գիւղում կան Սասոռսենք, տնեցիների թիւն է 35 հոգի, վերցնում են 240 սալլ հաց:

Հաջի-Նազարում Բովիկ Խաչոյի ընտանիքը, 36 հոգուց բաղկացած, գիւղացիք նրանց կարողութիւնը 10 հազարի են հասցնում:

Փռքը-Մարիարում կան Վարդանենք, 43 հոգի են և հարուստ:

Զաջուցի գլաւնի Խատիկի ընտանիքը 30 հոգուց աւելի է, ունի ջրաղաց, 2 օրավար ծառառունկ և հարուստ է:

Թորոսի գիւղում կենում են Դալի-Օլլանենք 40 հոգուց բաղկացած անդամներով:

Օրթաքիլիսեցի Տէր-Արսէնի ընտանիքը նոյնպէս փոքր չէ, մօտ 32 հոգուց բաղկացած: Նոյն գիւղում կան Ասատուրենք, դարձեալ 36 հոգուց բաղկացած:

Խմբան գիւղում կան Գետոյենք, 40 հոգի են:

Աղբուլաղում Նիրթեցոնց Յարութիւնի գերազատանը՝ 42 հոգուց ամլի է:

Երկար կը լիներ աւս ցուցակի շարունակելը: Ալսքանն էլ բասական է գաղափար կազմելու համար գիւղական մեծ գերդաստանների մասին: Մեծ գիւղերը քաղաքին հետևելով բաժան-բաժան են լինում Յաւալի է նկատել որ բաժանութիւնը սովորաբար կատարում է կոինելովի բաժանուղ եղբայրները զործը հաշու վերջացնել չեն կարող, ուստի ստիպուած զիմում են զատարաններին և երկու լողմն էլ անտեղի կերպով վասնում են իրանց կարողութիւնները զանազան գրադիների, ինքնակոչ վաստարանների տարով: Գիւղաց պարագմանքն անշրաժեշտութիւն պահանջում է համակեցութիւն: Գիւղաստունութիւնը մեր այժմեան պայմաններում աշխատասր ձեռքերի շատ պէտք ունի: Մէկ-երկու մարդով զործ դարձնել չի լինի: Քիչ մարդով գութան լծել, վար ու ցանք անել, խոտ կամ արտ հնձել, կալսել չի լինի: Որքան շատ են աշխատաւորները, այնքան էլ օգտակար է գիւղաստունութիւնը: Աշխատողների մի մասը ցանքով կը պարագի, միւս մասը անաստոններին կը հոգայ, և այլաւ կը դնար: Ն գիւղերում հասկանալի չէ առանց անաստուններ ունենալու գիւղացի լինել: Համինաց (մեծ տուն, բազմանդամ զերդաստանով) անելը ունին և լաւ ու շատ վարելու հողեր և բազմաթիւ անաստուններ: Բաժանուած, մանրացած տները զրկուած են թէ մէկից և թէ միւսից: Գիւղացու հողը բաժանուած է անհաստի վրայ: Քչուոր ընտանիքը կ'ունենալ գիշ հող: Յաւալի է տեսնել որ հէնց այդ քիչ հողը, որ պէտք է կերակրէր ընտանիքներին, շատ անզամ պարտքի և այլ պատճառներով ընկել է քալաքայի: Հարչի վածառականների ձեռքը, իսկ նրա գիւղացի տէրերը զրկուած են ապրուածի միակ միջոցից:

Այժմ գառնանք մեր խնդրի երկրորդ մասին, տեսնելու թէ ո՞րքան պսակ, կնունք և ննջեցեալ է լինում զաւառում, ի՞նչ մնացորդ է մնում կնունքից, որ և կազմում է անումը գիւղերում: Խնչպէս վերեն ասուց, աւելի պարզ հասկացողութիւն ունենալու համար այդ պատկերի մասին՝ մենք հաշին սկսում ենք վերջին տասնամեակից 91—900 թ.: Ագստեղ էլ, ինչպէս առաջ, զիւղերի առանձին-առանձին ծիսակատարութիւնները գումարել ենք միասին և գումարը դրել ենք տարիների հանդէպ:

11 գործակալութիւնը միասին, 125 դիւզ:

Տարիներ:	Պահպ:	Մկրտութ.		Նորացնելու թվական:	Ննջեցեալ:		Գործակալութ. անդամ:	Աճու- թիւն:	Մըն:	Տնօրինութ. անդամ:
		Արա- կան:	Իրա- կան:		Արա- կան:	Իրա- կան:				
1891	964	2,646	2,287	4,933	1,362	1,132	2,494	2,439	49,4%	
1892	1,092	2,507	2,330	4,887	2,277	1,853	4,130	707	14,6%	
1893	854	2,337	2,089	4,426	2,390	1,930	4,320	106	2,4%	
1894	929	2,321	2,205	4,526	1,647	1,365	3,012	1,514	33,5%	
1895	908	2,595	2,336	4,931	1,251	1,114	2,365	2,566	52,0%	
1896	1,068	2,570	2,363	4,933	1,126	978	2,104	2,829	57,3%	
1897	1,307	2,793	2,539	5,332	1,425	1,197	2,622	2,710	51,0%	
1898	958	2,649	2,408	5,057	1,884	1,541	3,425	1,682	32,8%	
1899	1,087	2,783	2,532	5,315	2,466	2,284	4,750	565	10,6%	
1900	964	2,979	2,646	5,625	1,293	1,105	2,398	3,227	57,4%	
Տիջին թիւը	10,131	26,180	23,735	49,915	17,121	14,499	31,620	18,295	36,4%	

Ո՞չ մի գարակիչ հիւանդութիւն, նոյն խակ խօլերայի նման համաձարակը, այսպէս վատ չի ազդել, ինչպիսին կարող է ազդել թանգութիւնը, այսինքն նախորդ տարուայ երաշտը, ընթերցալը պարզ տեսնում է, որ 93-ին և պահների թիւն է պակաս, և չնունդը, դրա հետ միասին մեռնողների թիւն զգալի կերպով բարձր է միւա աարիներից, այսպէս որ աճումը, այսինքն ծնուածներից դուրս գալով մեռնողների թիւը, իջնում է 106-ի, կամ 2, 39%-ի: Այդ այս դժբախտ տարին էր, երբ ժողովուրդը նախկին տարուց բերք չէր ստացել երաշտութեան պատճառով, չունէր ուտելու պաշար. և չէր կարող սեպհական միջոցներով ապրել ուստի Կով. Հայ. Բարեգ. ընկերութիւնը փող էր ուղարկում ուտելիք զնելու համար: Եւ շատ բնական է, մի ժողովուրդ, որի միակ և զլիսաւոր պարապմունքն է երկրագործութիւնը, այսպէս որ յուսը դրել է իր ցանքսի վրայ, որ եթէ տարին առատ եղաւ, լաւ, խակ եթէ ո՛չ, այն տարին քաղցած կը կոտորուի: Էլ ի՞նչպէս մտածէ ամուսնութեան, մասին: Խակ երաշտ և անքեր տարիներ սովորաբար նիրակում պատահում է բաճախ:

Տասը տարուայ ընթացքում ժողովուրդն աճել է 18295 հզդի կամ 36, 60%: Եթէ ընդունենք, որ տարեկան միջին հաշուով մարդիկ 1830 հոգով աւելանում են, դուրս է զալիս որ սրանից 30 տարի առաջ, Ալեքս. Վիճակում ապրում էին հիմիկուայ մարդկանց թուի կեսը (109360-ի), կամ ուրիշ խօսքով, 30 տարի առաջ կային 54900 հոգի պակաս այժմեանից: Ասել է թէ միւնոյն քանակութեան հողը, շատ աւելի յոզնած, պէտք է կերակրէ համարեա երկու անգամ շատացած մի ազգաբնակութիւն:

Նորապահում այս երեսութը թերես մի առանձին չարիք չէր, որովհեակ նրանք գիտեն երկիրը մշակել կատարելագործուած ձևերով, զիտեն արհեստական միջոցներով պարարտացնել այն ու առուներ անցկացնելով

Թանօրութիւն. 92-ն—Խօլերա. 39-ին թանգութիւն. 98-ին, 99-ին —դիմուներիտ և ուրիշ գարակիչ հիւանդութիւններ:

ջրել, արտը հասցնել իրանց ուղածի պէտ: Խակ մեզանում—մեզանում զեռ ևս հողը մշակում են նախնական-նահապետական ձևերով, պարարտացնելու մասին խակի դադավար չունեն, իսկ ջրելը խօմ, Նատօն կամքից է կախուած: Դարերի ընթացքում Ախուրեան գետը իր հունով հոսում է, առանց շրջակարգին զգալի օգտու տալու: Նրա ջրով կարող էին օգտուել դաշտի 20 և ամելի զիւղեր, բաց մինչև օրս ո՛չ քաղաքացիները սիրու արին ընկերութեամբ գետը իր ակոնքից շրջել դէպի Շիրակալ դաշտի արևելեան կողմը և ո՛չ օգտուելու ձեռնհամ զիւղերն իրանց հաւաքական ոյժով, ընդհանուր աշխատանքով կարողացն լըջել: Գրում են Խուաստանի ցուցագաշտերի մասին, Շիրակը հին-հին դարերից յայտնի զիւղատնտեսութեան պարապելու տեղ է, սակայն այժմեան պայմաններում ժողովուրդը զոնուում է յետին դրութեան մէջ: Ծայրը է ծայր ման զալով զաւափի մէջ, ամեն տեղ միւնուն չքաւորութիւնն է աչքի ընկնում: Ամենեին մեծամասնութեան մօտ նշանակութիւն չունեն զիւղերում ցաք ու ցրիւ զոնուած շէն տները, այն ինչ ընդհանրապէս տիրում է ռոռկալի աղքատութիւն: Խթէ այս աղքատութեան վրայ աւելցնենք զիւղացու թանձր տփիտութիւնը, նախապաշարմունքներն ու սնոստիապաշտութիւնը, ապա կը տեսնենք որ զիւղացին համարեա անասնական կեանք է վարում: Յօվ պէտք է զիւղացուն առաջնորդէ խամարից դէպի լուս, ի՞նչպէս պէտք է նրա դրութիւնն ուղղուի: Ահա հարց:

Առհասարակ թէ՛ քաղաքում և թէ զիւղերում իրական սեռը պակաս է ծնուում արականից: Այս բանը թիւրեա ունի իր բնախօսական պայմանը: Բայց թուում է թէ քաղաքում տնտեսական պայմանների շնորհիւ, արական սեռից աւելի են մեռնում, ուստի և երկու սեռի մէջ հաւասարակշռութիւն է պահպանում: Անկասկած քաղաքներում կին-մարդն աւելի բարոք կեանք է վարում, քան զիւղերում: Քաղաքներում ընտանիքի ծանրութիւնը տղամարդկանց վրայ է ընկնում կեանքի բարդ պայմանների շնորհիւ տղամարդն աւելի շրա է ընկնում հոգերից և շատ էլ գերեզման մտնում, մինչդեռ կինը, եթէ չը լինէր որդենութիւնը, շատ աւելի հանդիստ է ապրում, վայելում է տղամարդու խնամքն ու հոգացողութիւնը, ուստի և շատ է ապրում: Մեր զիտողութիւնները ցուց են տալիս, որ քաղաքում շատ պառաներ կան, քան թէ ծերեր, շատ արքի կանալք, քան թէ տղամարդիկ: Գիւղերում կնոջ դրութիւնը բոլորովին որդիշ է: Զանէլ, զեռ չափահան չեղած տղաներին կարգում են, հարս են բերում, որ տան աշխատող ձեռքն աւելանար: Կինը տանը պէտք է աշխատի, պէտք է նաև օդնէ մարդուն բոլոր գործերում: Նրա վրայ պէտք է աւելացնել կնոջ բնական վիճակը—որդի ձնելը: Նրգէն մամուլի մէջ շատ է գրուել, թէ ի՞նչ բարբարու, անխիղը միջոցներ են գործ գնում կնոջը երկունքից պատահու համար: Գիւղացին բացարձակ չի հաւասար բժկական զիտութեանը: առողջապահական կանոնները նրա համար գոյութիւն չունեն: Նա իր կոշտացած նախապաշարմունքներով կառում է զիտութեան դէմ և այդ անմիտ պայքարում զոնում է հարիւրաւը թշուակ կանանց, որոնք դեռ շատ կապ-րէին, շատ որդիներ կը տալին մարդկութեանը:

Աւելորդ չենք համարում մի թեթէ հաշիս էլ զնել մեր գաւառի քահանաների թուի մասին:

Գաւառիս 125 զիւղերում կան 156 քահանալ: Դրանցից 9ը թա-քիլասիի գործակալութեան զիւղերում կան 24 քահանայ, Բող-եօխուի գործակալութեան զիւղերում 7 քահանայ, Զորլուալ գործ: 13 քահանակ,

Նորաշենի գործ՝ 12 ք., Արթիկի գործ՝ 16 քահանայ, Հռոմի գործ՝ 18 քահանայ, Մահմուտնուզի գործ՝ 15 քահանայ, Տաւշան-Դշլաղի գործը՝ 16 քահանայ, Մեծ-Պարնի գործ՝ 13 քահանայ, Համամլի գործ՝ 12 քահանայ, և Մեծ-Պարաքիլիսա 7 քահանայ=156.

Քահանաներն ըստ ձեռնադրութեան՝ հինգ հոգի՝ ձեռնադրուած են 50—60 թուերին, երեսուն հոգի՝ 60—70 թուերին, երեսուն մէկ հոգի՝ 70—80 թուերին, երեսուն չորս հոգի՝ 80—90 թուերին, իսուն վեց հոգի՝ 1890—1900 թուերին, Քահանաներն ընդհանրապէս տգէտ, ողորմելի մարդիկ են, բացառութեամբ մի քանիսի:

Ն. ք. ՆԻԿՈՂՈՍԵԱՆ